ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Այսօր մեծ առավոտն է մեր հոգիներուն, զի խաչյալն Քրիստոս հաղթելով մահն ու չարիքը աշխարհի, հարություն առավ մեռելներեն և մեզ պարգևեց մեծ հույսը հավիտենական կյանքի:

Մեր սիրտը լի այս լույս հավատքով, Քրիստոսատես Մայր Աթոռ սուրբ Էջմիածնեն Ձեզի կբերենք մեծ ավետիսը այս աշխարհասասան և Մեր աղոթքը ջերմ, որ Փրկչին մեր Հիսուսի հարության շնորհները առատապես իջնեն մեր Մայր եկեղեցվո և անոր սպասավորներուն և հավատացյալ զավակներուն վրա, որպեսզի անոնք բոլորը դառնան «լուսո որդիներ» և ապրին ու գործեն այս երկրային կյանքը հարության տեսիլքով, որ գերագույն երաշխիքն է երկրային առաքինազարդ ու ստեղծարար կյանքի:

Սուրբ Հարության շնորհները թող ճառագայթեն նաև ձեր հավատացյալ ժողովուրդի համայնքային ու ընտանեկան կյանքեն ներս, որպեսզի այդ շնորհներով առավել աճին ու զորանան անոնց քրիստոնեական առաքինությունները ու հայկական ոգեկանությունը:

Եղբայրական սիրո ողջույն Ձեզ և համայն հայ հավատացյալ Մեր զավակներուն:

«Զխաղաղութեան զհետ երթայք ընդ ամենեսին և զսրբութեան, առանց որոյ ոչ ոք տեսանիցէ զՏէր» (Եբր. ԺԲ 14) և «Եղբայրսիրութիւն հաստատեսցի առ ձեզ» (Եբր. ԺԳ 1). ամեն:

«Փառք Ցարութեան Քո Տէր»:

ՎԱՉԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

* * *

Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից: